

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. ՍՈՒԹԻԱՍՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի
հրատարակություն, 1982, 440 էջ:

Համալսարանի հայոց լեզվի ամբիոնը, որ համարված է լեզվաբանների տարրեր սերունդների ներկայացուցիչներով, միշտ էլ աշխի է ընկել գիտական արդյունավետությամբ։ Հանրապետության լեզվաբանական մտքի այս կարևոր օջախում, մանկավարժական աշխատանքին գուգահեռ տարրվել և տարվում են նաև գիտահետազոտական արգասավոր աշխատանքներ, որոնց արդյունքները դրոշակի ներդրում են հայ լեզվաբանության նվաճումների մեջ։ Արժե հիշատակել Հ. Բարսեղյանի, Ա. Սուրբայանի, Մ. Ասաւորյանի, Ա. Գյուլբողազյանի, Ալ. Մարգարյանի, Ս. Գալստյանի, Ս. Ավագյանի և շատ ուրիշների ուսումնասիրությունները՝ մենագրություններն ու հոդվածները՝ նվիրված հայոց լեզվի ու հայագիտության տարրեր հարցերին։

Սակայն, որքան էլ տարօրինակ թվա, մինչև վերջերս բանասիրական ֆակուլտետի ուսանողությունը շուներ մայրենի լեզվի դասագիրը, որը ի մեջ բերելով անցյալի նվաճումները, միաժամանակ համապատասխաներ այսօրվա պահանջներին։ Պրոֆ. Սուրբայանի «Ժամանակակից հայոց լեզու» բուհական ձեռնարկը գալիս է լըրացնելու այդ բացը։

Տպագրվել է նաև հիշյալ դասագրի երկրորդ հատորը՝ ձեռաբանության բաժինը, որը հեղինակել է պրոֆ. Մ. Ասաւորյանը։ Դասագրի երրորդ և չորրորդ հատորները, որոնցում կներկայացվի հայերեն շարահյուսությունը, լույս կտեսնեն առաջիկայում։

Պրոֆ. Ա. Սուրբայանի հեղինակած ժամանակակից հայոց լեզվի բուհական ձեռնարկի առաջին հատորի ենթավերանգում են շվում են հեջյունաբանություն, բառագիտուրյուն, բառակազմուրյուն բաժինները, սակայն դասագիրը ունի ավելի լայն ընդուրկում, քան կարելի է այս ենթավերանգում ընթերցելով ենթադրել։

Դասագրին սկսվում է ներածությամբ, ուր համառոտ, բայց և հանգամանորեն տրվում է հայոց լեզվի անցած ուղին, պարբերացվում են նրա զարգացման տարրեր փուլեր՝ գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար՝ իր երկու տարրերակներով (արևմտահայերեն և արևելահայերեն)։ Այս բոլորի հետ միասին՝ լեզվի զարգաց-

ման յուրաքանչյուր փուլը բնութագրելու համար տրվում են նրանով ստեղծված մշակութային-գրական նշանակալից արժեքները։

«Հնչյունաբանություն» բաժնում քննված են հայոց լեզվի հնչյունական համակարգին բնորոշ իրակությունները՝ վանկ, շեշտ, ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, հնչյունափոխություն, ուղղափոսություն և ուղղագրություն և այլն։ Թեմաների առակ թվարկումն իսկ ցույց է տալիս, որ այս բաժնի նյութերը շարադրելիս հեղինակը հավատարիմ է մնացել գործող բուհական ծրագրին, որը մի շաբթ գիտնականների երկարառու չանցերի արդյունքն է։ Թասագրի այս բաժնում, ի տարրերություն նախորդ ուսումնասիրությունների, ընդգրկվել է նաև գրաբանուրյուն ենթարածինը, որը խիստ անհրաժեշտ է ուսանողներին հայերենի գիտական տառադարձության սկզբունքներին ծանոթացնելու համար։ Կարևոր է նաև այն, որ հնչյունաբանությունները ընդգրկվել է նաև գրաբանուրյուն ուղղագրության վերաբերյալ ընդունված պաշտոնական ուղղումները։

Դասագրի հաջորդ բաժինը բառագիտությունն է, ուր բննված ու բնութագրված է ողջ հայերենի բառագանձր։ Առանձնահատուկ քննության են

ենթարկված բառի ու նրա տարրերակների, բառիմաստի հետ կապված ըմբռնումները։ Այս բաժնում կարևոր է, մեր կարծիքով, բառի ներքին ձևին նվիրված հատվածը, քանի որ մամուլում և այլուր այսօր էլ մերթ ընդ մերթ արտահայտվում են կարծիքներ, տեսակետներ, ուր անտեսվում են բառի ներքին ձևի մասին եղած գիտական ըմբռնումները (օդակայան չի նշանակում օդակայայան, խնայքին միայն խճով պատրաստված ուղին չէ, և այլն)։ Հեղինակը միանգամայն համոզիչ ձևով գրում է. «Այդ առումով... բաղադրյալ բառերի, այսպես կոչված, ներքին մեջ արտահայտված կապը պայմանական, երևութական է» (էջ 128.)։

Դասագրի առանձնապես հաշողված և ինքնօրինակ բաժիններից են «Իմաստաբանություն» և «Ժամանակակից հայոց լեզվի բառապաշտար,

թյան և բառարանագրության առաջատար մասնագետ, այս բաժիններում ներդրել է իր հարուստ փորձն ու գիտելիքները: Արդյունքում ստացվել է հարուստ փաստական նյութով հազեցած և գիտական համակարգման ենթարկված շարադրանք: Երբեք վերն ասվածի ապացույց, բերենք միայն մեկ օրինակ. բառիմաստի, նրա տիպերի ու տեսակների մասին հոսութիս հնդինակը նշում է բառիմաստի հետեւալ տեսակները. 1) բառի առարկայական (իրեղեն) իմաստ, 2) բառի ածանցային իմաստ, 3) վերացական իմաստ, 4) թանձրացական իմաստ, 5) բառարանային իմաստ, 6) հիմնական իմաստ, 7) երկրորդական իմաստ (իր ենթատեսակներով՝ ա) կողմնակի իմաստ, բ) լրացուցիչ իմաստ), 8) նախնական իմաստ, 9) պատճառարանված իմաստ, 10) սովորական (կամ ընդունված) իմաստ, 11) պատահական (կամ չընդունված) իմաստ, 12) հավանության շարժանացած իմաստ, 13) փոխարերական իմաստ:

Խեկ եթե ավելացնենք նաև, որ հիշյալ տարրերակումները աշքի են ընկնում գիտական ճշգրգրիտ ձեւակերպումներով և ընութագրական օրինակներով, ապա պարզ կդառնա, թե որքան յուրահատուկ և հստակ ընութագրման է ենթարկվել բառիմաստը:

Նույնքան սպառի ու գիտական դասակարգման է ենթարկվել բառապաշարը իր բոլոր դրսեվորումներով: Այս քննված է ըստ գործածության տարրեր ոլորտների, ըստ ոճական և հուգարատահայտչական գունավորման, ըստ ծաղման և այլն:

Դասագրքի բառակազմուրյուն բաժնում մանրագնին քննության են հնթարկվում բառի կառուցի և նրա ձեռւթային կազմի հետ առնչվող հարցերը: Այս բաժնում նորություն է բառի կառուցածքային-ձեռւթային բանաձեռի ուսուցումը, առանց որի այսօր անհնար է պատկերացնել բառակազմության վերաբերյալ որևէ ուսումնասիրություն: Այսպիսով, դեռևս ուսանողական նատարանից բանաձեռը առնչվում է լեզվի ուսումնասիրության արդիական մեթոդներին:

Դասագրքի վերջին բաժինները կազմում են Գերազանցանուրյանը և Խառարանագրույրյանը: Ուշագրավ է մանավանդ վերջին բաժինը, ուր տրվում են բառարանագրության հիմնական բարդունքները, ինչպես նաև ընութագրվում են մեր նշանավոր բառարանները՝ սկսած «Հայկագյան» բառարանից մինչև էդ. Աղայանի «Արդի հայկերենի բացարական բառարանը»:

Թեմաների թուուցիկ թվարկումն իսկ ցույց է տալիս, թե որուհական ուսուցման հետ առնչվող ինչ բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են ընդգրկված հիշյալ դասագրքում, որի արժանիքներից առաջինը պետք է համարել բուհական հաստատված ծրագրին ճշտիլ համապատասխանությունը, Գաղտնիք չէ, որ արդի հայերենի բազ-

մաթիվ կնճռու հարցեր գեռես վիճահարույց են և կարու են լրացուցիչ ճշգրտումների Գաղտնիք չէ նաև, որ մի շարք հարցերի վերաբերյալ կան վիճելի, սակայ համոզիչ տեսակետներ Յուրաքանչյուր գիտական ազամ է մենագրական աշխատության մեջ զարգացնելու և հիմնավորելու իր տեսակետը, սակայ այլ պահանջներ են ներկայացվում ձեռնարկին: Այստեղ պետք է տրըվեն առավել տարածված, ընդունելի, հնարավորին շափ անառարկելի գիտելիքներ Սա պահանջում է մեծ հմտություն և ուսումնասիրվող նյութի անթերի իմացություն, մի բան, որով լիովին օժտված է գրախոսվող գրքի հեղինակը Բացի այդ, խիստ էական է, թե այս կամ այն հարցը ինչ ձեռվ ու ոճով է ներկայացվում դասագրքում: Պատահական չէ, որ կա նույնիսկ «դասագրքային ոճ» ըմբռնումը ման շարադրանքը ընթացրում է մատչելիություն և դյուրըմբռնելիություն, նյութի գարագումը զարգից դեպի բարզը: Այս հարցում ևս պրոֆ. Ա. Սուրբիայանի սույն ձեռնարկում է ակնհայտ են ձեռքբերման նաև հիմնականում շարագրված է վերոհիշյալ ոճով, որը դյուրացնում է ընկալումը և յուրացումը:

Զի կարելի ասել, որ այս գիրքն ստեղծվել է պարապ տեղում: Ճիշտ է, հատուկ դասագրքեր չենք ունեցել հնչյունարանության և բառագիտության վերաբերյալ, սակայ երկար տարիներ ուսուցման բնագավառում իրենց շնորհակալ գործն են կատարել Հր. Աճառանի և Մ. Արելյանի մեծարծեր ուսումնասիրությունները, Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը», ինչպես նաև հաջորդ սերնդի լեզվաբանների (Էդ. Աղայան, Գ. Զահուկյան, Ա. Խաչատրյան, Ս. Արքահամյան և ուրիշներ) մենագրական ուսումնասիրությունները Պրոֆ. Ա. Սուրբիայանը այս ձեռնարկը գրելիս լայնորեն օգտագործել է թե՛ իր նախորդների և թե՛ ժամանակակիցների փորձն ու ձեռքբերումները, փորձառական հնչյունարանության նվաճումները, որով և այս դասագրքը դառնում է ընդգրկուն և համապարփակ Կարելի է նշել նաև դասագրքի մի շարք այլ արժանիքներ ևս (շարադրանքի համաժամանակյա բնույթը, փաստական նոր և հարուստ նյութի շրջանառության մեջ դնելը, դրանց նորովի մեծնարանությունները, մատուցվող նյութի ճշգրիտ և հստակ սահմանագծումները և այլն):

Այս կարգի աշխատության մեջ անշուշտ անխուսափելի են նաև թերություններն ու վրիպառմները: Եսր կարծիքով, որոյ թեմաներ դասագրքում պատշաճ ձեռվ լին լուսարանված: Այսպես, հնչյութի գաղափարը նորություն է ուսանողի համար, բայց այն դասագրքում խիստ թուցիք ձեռվով է տրված, և այդ սահմաններում ուսանողները դժվարանում են լրիվ և ամրողական պատկերացում կազմել հնչյութի մասին:

Որոշ դեպքերում հեղինակը հեռանում է իր իսկ որդեգրած ճիշտ սկզբունքից. Հիմնահարցերը քննել՝ գնալով պարզից դեպի բարդը, որևէ նոր տերմին գործածելիս՝ նախ տալ դրա բացատրությունը: Այս թերությունը նկատելի է հատկապես այն հատվածներում, երբ խոսվում է փորձառական հնչյունաբանության հետ առնչվող հարցերի մասին:

Այսպես, 28-րդ էջում առանց որևէ նախնական բան բացատրության գործածվում են շարույթ, հենցաշրջակա տերմինները, որոնք հասկանալի չեն անպատճառապես տրվում են դրանք համապատասխան արտադրության հետ: Այս գործածվում է անհաջողությունը, որ մայրենի լեզվի ուսումնասիրության այս դասագիրքը դեռ երկար ճանապարհ է անցնելու, և նրա հղիումն ու կատարելագործումը կնպաստեն դասագրքի ու նրա հեղինակի առջև դրված խնդրի կենսագործմանը. պատրաստել մայրենի լեզվին հմտորեն տիրապետող և այն էլեկտրոնային սիրող բանասեր մասնագետներ:

Ռ. ՍԱԳԱՎԵՑՈՅԱՆ

Սա դասագրքի առաջին հրատարակությունն է, և մեր դիտողությունները, ինչպես ասացինք, հեշտ ուղղելի են, բայց դրանք նշելն անհրաժեշտ է, քանի որ մայրենի լեզվի ուսումնասիրության այս դասագիրքը դեռ երկար ճանապարհ է անցնելու, և նրա հղիումն ու կատարելագործումը կնպաստեն դասագրքի ու նրա հեղինակի առջև դրված խնդրի կենսագործմանը. պատրաստել մայրենի լեզվին հմտորեն տիրապետող և այն էլեկտրոնային սիրող բանասեր մասնագետներ: